



Դպրոցական կլիմայի վերաբերյալ իրավունքների օրինագիծ

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը (ԼԱՄԴՇ) պարտավորվում է ապահովել անվտանգ և առողջ դպրոցական միջավայր, ինչը կաջակցի բոլոր աշակերտների բարեկեցությանը ամեն առումով: ԼԱՄԴՇ-ի աշակերտները, անձնակազմը և ծնողները/խնամակալները արժևորում են արդար և հետևողական ուղեցույցներ ուղղված կարգապահության կուլտուրայի ներդրմանը և զարգացմանը, որոնք հիմնված են դրական վարքագծի հետ կապված միջոցների վրա և զերծ են պատժիչ մեթոդներից, որոնք խանգարում են ուսուսումնական պրոցեսին:

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանը պարտավորվում է ապահովել աշակերտներին որակյալ կրթությամբ, որը կապահովի հնարավորություն ընտրելու ուղիներ դեպի քոլեջ կամ աշխատանք, որոնք կօգնեն նրանց դառնալ հասարակության օգտակար անդամներ: Բոլոր Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի աշակերտները կայցելեն դպրոցներ, որտեղ ուշադրություն է դարձվելու մթնոլորտի անվտանգությանը, դասավանդմանը և ուսուսումնականությանը, միջանձնային հարաբերություններին և ինտիմիտացիոնալ միջավայրին, որը ազդեցություն կունենա աշակերտի ուսուցման և բարեկեցության վրա: Այս դրական դպրոցական մթնոլորտը առաջարկելու է.

- **Համադպրոցական դրական վարքագծի ուղղված միջոցներ և աջակցություն (SWPBIS)**
կներդնի դասերին մասնակցելու արգելքների այլընտրանքներ և դրական վարքագծի ուղղված միջոցներ Կարգապահության քաղաքականության մեջ: Համապատասխան կանխարգելման և միջոցների մոտեցումները ապահովում են հաշվետվողականություն և կարգաբերում՝ կարգապահային միջադեպի ազդեցությունը հասկանալու և հասցրած ժխտի վերացման միջոցով՝ համատեղ որոշումների կայացման գործընթացի օգնությամբ:
- **Դասերին մասնակցելու արգելքների այլընտրանքներ և դրական վարքագծի ուղղված միջոցներ և աջակցություն**
Դասերին մասնակցելու արգելքների այլընտրանքների քաղաքականությունը օգտագործվելու է բոլոր աշակերտների համար հետևողականորեն ու տարիքին համապատասխան ձևով նախքան որևէ արգելքների, որոշ իրավախախտումների դեպքերի բացառությամբ, երբ արգելքը պահանջվում է Կալիֆորնիայի կրթության օրենսգրքով, § 48915 (c): 2013 թ. դրությամբ, ոչ մի աշակերտ դասերին մասնակցելու արգելք չի ստացել կամ վտարվել «դիտարկյալ իրավախախտում» (48900 (k) համար:
- **Դիտարկման համար հասանելի տվյալներ դպրոցական կարգապահության, դպրոցական կալանքի և կանչերի (դատարան) վերաբերյալ**
ԼԱՄԴՇ - ն հրապարակելու է ամսական տվյալներ դպրոցի ներսի և դպրոցից դուրս արգելքների, հնարավոր տեղափոխման, վտարման, կանչերի (դատարան) և դպրոցական կալանքի մասին դպրոցի կամ շրջանի վերաբերյալ: Նման տվյալները, պահանջի և առկայության դեպքում, պետք է տարանջատվեն ըստ ենթակամքների, օրինակ՝ ռասայի, ազգության, Անգլերեն սովորողի կարգավիճակի, հաշմանդամության, սեռի, սոցիալ - տնտեսական վիճակի և իրավախախտման, սակայն տրամադրվեն այնպիսի եղանակով, որ պահպանվի զաղտնիություն յուրաքանչյուր աշակերտի դեպքում:
- **Վերականգնողական արդարադատության (RJ) մոտեցումներ, որոնք լուծում են աշակերտների ներանձնային կոնֆլիկտներ Մյուսած 2015-2016 թ. դպրոցները կներդնեն և կսկսեն իրականացնել վերականգնողական արդարադատության (RJ) մոտեցումներ, անհրաժեշտության դեպքում, որոնք լուծելու են դպրոցական կարգապահական միջադեպեր, կլինեն կադրեր, պատրաստված վերականգնողական միջոցներ իրականացնելու համար, նաև բոլոր ներգրավված կողմերը պատրաստակամորեն կմիանան, կբացահայտեն հասցված ժխտը և կմշակեն համաձայնագիր ներդաշնակությունը վերականգնելու վերաբերյալ: Վերականգնողական գործընթացի ժամանակ խումբը**

մշակում է համատեղ պայմանագիր, ուղղված ժխտը և արմատային պատճառները վերացնելուն կանխելու հետագա ժխտը: Վերականգնողական արդարադատության (RJ) մոտեցումները կարող են օգտագործվել որպես միջոցներ, որոնք կհամապատասխանեն Համադպրոցական դրական վարքագծի ուղղված միջոցների և աջակցության (SWPBIS) քաղաքականությանը դպրոցի բոլոր կարգապահական միջադեպերի ժամանակ, բացի այն դեպքերից, երբ պահանջվում է առաջարկություն դպրոցից հեռացման մասին ըստ Կալիֆորնիայի կրթության օրենսգրքի, Բաժնի 48915, կամ երբ խոսքը գնում է անվտանգության մասին:

- **SWPBIS-ի շրջանային նպատակային խումբ**
SWPBIS-ի շրջանային նպատակային խումբը պետք է ներառի ուսուցիչ, աշակերտ, ադմինիստրատոր և ծնողի ներկայացուցիչներ յուրաքանչյուր Ուսուսումնական կենտրոնից, ինչպես նաև անդամներ համայնքային կազմակերպություններից առաջարկություններ ներկայացնելու համար, և այն տալու է առաջարկություններ շրջանում դրական վարքագծի կուլտուրայի և Վերականգնողական արդարադատության (RJ) մոտեցումների իրականացման վերաբերյալ աշակերտների, անձնակազմի և ծնողների / խնամակալների հետ աշխատելու համար:

- **Դպրոցի տարածքային ոստիկանների դերի և պարտականությունների վերաբերյալ դրույթներ**
Աշակերտները իրավունք ունեն գտնվել անվտանգ և առողջ դպրոցական միջավայրում, որտեղ հնարավորինս նվազագույնի է հասցված իրավապահ մարմինների, վերահսկողության և անչափահաս և քրեական արդարադատության համակարգի ներգրավվածությունը, եթե դա հնարավոր է իրավաբանական տեսակետից:

- **Պաշտոնական բողոքի ներկայացման համակարգի օգտագործում**
Համադպրոցական դրական վարքագծի ուղղված միջոցներ և աջակցություն չկիրառելու դեպքում Աշակերտները և ծնողները/խնամակալները իրավունք ունեն ներկայացնելու պաշտոնական բողոք, եթե SWPBIS-ը չի իրականացվում 60 օրվա ընթացքում պահանջ ներկայացնելուց հետո:

